

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ 2019-2020

5-րդ դասարան,


Տևողությունը 150 րոպե

1. Հաշվել գումարը. $1+2+3+\dots+19+20$
1) 210 2) 45 3) 420 4) 105

2. Ո՞ր թվանշանն է գրված B տառի փոխարեն, եթե հայտնի է, որ
- $$\begin{array}{r} + AAA \\ \underline{BBB} \\ AAAC \end{array}$$

- 1) 1 2) 0 3) 9 4) 3

3. Հաշվել տրված պատկերում հատվածների քանակը.



- 1) 9 2) 8 3) 16 4) 36

4. Պապը թոռնիկներին ասաց. 130 ընկույզը բաժանված է 2 կույտերի այնպես, որ փոքր կույտի ընկույզների քառապատիկը երեք անգամ քիչ է մեծ կույտի ընկույզների քանակից: Գտնել փոքր կույտի ընկույզների քանակը:

- 1) այլ պատասխան 2) 20 3) 30 4) 40

5. 7 մարդ 4 օրում օգտագործում են 84 կգ սնունդ: 3 մարդ 5 օրում որքա՞ն սնունդ կօգտագործեն:

- 1) 30 կգ 2) 40 կգ 3) այլ պատասխան 4) 60 կգ

6. Ֆուտբոլային առաջնության ընթացքում ֆուտբոլային թիմերի միջև տեղի է ունեցել 36 խաղ: Քանի՞ թիմ է մասնակցել առաջնությանը, եթե յուրաքանչյուր թիմ մյուս թիմերից յուրաքանչյուրի հետ խաղացել է 1 խաղ:

- 1) 9 2) 8 3) 10 4) 6

7. Արմենի, Կարենի և Արսենի մատիտները միասին 48-ն են: Գտնել Կարենի մատիտների քանակը, եթե դրանք Արմենի մատիտների քանակի կեսից ավել են 3-ով, իսկ Արսենի մատիտների քանակը Կարենի մատիտների քանակի եռապատիկն է:

- 1) 9 2) 6 3) 12 4) 27

8. Հայտնի է, որ դասարանի 12 աշակերտներից 9-ը տիրապետում են անգլերենին, 8-ը՝ ռուսերենին, իսկ 1 աշակերտ չի տիրապետում այդ լեզուներից և ոչ մեկին: Գտնել միայն ռուսերենին տիրապետող աշակերտների քանակը:


- 1) 2 2) 6 3) 3 4) 7

9. Արկղում կա 10 կարմիր, 7 կանաչ, 8 դեղին և 5 սև գնդակներ: Մթության մեջ ամենաքիչը քանի՞ գնդակ պետք է հանել, որ արկղից հանված գնդակներից գոնե մեկը լինի կարմիր:

- 1) 11 2) 30 3) 21 4) 3

10. Ռուբենը, 3 կրակոցից յուրաքանչյուր անգամ խոցելով իրարից տարբեր նշանակետերից որևէ մեկը, ընդամենը հավաքեց 12 միավոր, իսկ Արմանը, ևս չլրիպելով և 3 կրակոցից յուրաքանչյուր անգամ խոցելով իրարից տարբեր նշանակետերից որևէ մեկը, ընդամենը հավաքեց 6 միավոր: Ո՞ր միևնույն թիվը կամ թվերն են խոցել և՛ Ռուբենը և՛ Արմանը:

- 1) 3 և 2 2) 2 և 4 3) 1 4) 3



11. 3 բանանի և 4 խնձորի արժեքը միասին 1000 դրամ է, իսկ 4 բանանի և 3 խնձորի արժեքը միասին՝ 1100 դրամ: Ի՞նչ արժե 1 բանանը:
12. 203-ն ինչ-որ թվի վրա բաժանելիս մնացորդում ստացվում է 1, իսկ 103-ն այդ նույն թվի վրա բաժանելիս մնացորդում ստացվում է 2: Ո՞ր թվի վրա էին բաժանել:
13. Գտնել այն երկնիշ պարզ թվերի քանակը, որոնց թվանշանների տեղափոխումից ևս ստացվում է պարզ թիվ:
14. Գտնել $21 \cdot 22 \cdot 23 \cdot \dots \cdot 48 \cdot 49 - 71$ արտահայտության արժեքի վերջին երկու թվանշաններով առաջացած երկնիշ թիվը:
15. 1-ից մինչև 20 բնական թվերը գրված են կողք-կողքի (1, 2, 3, ..., 19, 20): Նրանց ինչ-որ մասը ներկված է դեղին գույնով, իսկ մնացածները՝ կարմիր գույնով: Հայտնի է, որ կարմիր գույնով ներկված յուրաքանչյուր թվի հարևանությամբ կարմիր գույնով ներկված թիվ չկա և դրանց գումարը 10-ով մեծ է դեղին գույնով ներկված թվերի գումարից: Ո՞րն է կարմիր գույնով ներկված ամենամեծ թիվը: